ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ2/15594/02/23

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՈՐԾԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

նախագահող դատավոր Ա. Շիլաջյանի

2024 թվականի նոյեմբերի 26-ին քաղաք Երևան

ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ նաև՝ Դատարան), ուսումնասիրելով թիվ ԵԴ2/15594/02/23 քաղաքացիական գործը,

Պ Ա Ր Զ Ե Ց

«Բիօն» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 18.07.2023 թվականին հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Գյումրի համայնքի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի, երրորդ անձինք՝ «Քրոու Ընդ Ասատրյանս» ՍՊ ընկերության, ԱՁ «Վարդան Սայադյան Կառլենի»՝ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունը և պայմանագիր կնքելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դատարանի (դատավոր՝ Լ. Սաղոյան) 03.08.2023 թվականի որոշումներով հայցադիմումն ընդունվել է վարույթ, պատասխանող Գյումրի համայնքի «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ից պահանջվել է թիվ «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-09/23» ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները, որոշվել է գործի քննությունն իրականացնել գրավոր ընթացակարգով:

Դատարանի (դատավոր՝ Լ. Սաղոյան) 24.08.2023 թվականի որոշմամբ գործի նշանակվել է դատական նիստ:

Դատարանի (դատավոր՝ Լ. Սաղոյան) 14.09.2023 թվականի վճռով հայցը մերժվել է, հայցային վաղեմության ժամկետն լրացած լինելու հիմքով, վճռվել է. « 1

«ԲԻՕՆ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Գյումրի համայնք «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի, երրորդ անձինք՝ «ՔՐՈՈՒ ԸՆԴ ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ, Ա/Ձ «ՎԱՐԴԱՆ ՍԱՅԱԴՅԱՆ ԿԱՌԼԵՆԻ»՝ Շիրակի մարզի Գյումրի համայնքի կարիքների համար «Գյումրու համայնքապետարանի աշխատակազմ» ՀԿՀ-ի «ՀՀՇՄԳՀՀԿՀ-ԳՀԾՁԲ-09/23» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.06.2023 թվականի թիվ 4 արձանագրությունը և դրա հիման վրա հանձնաժողովի 21.06.2023 թվականին հրապարակված պայմանագիր կնքելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, մերժել՝ հայցային վաղեմություն կիրառելու հիմքով:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված: (...) »:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.06.2024 թվականի որոշման համաձայն. « 1. Հայցվորի ներկայացուցչի վերաքննիչ բողոքը բավարարել:

2. Թիվ ԵԴ2/15594/02/23 քաղաքացիական գործով ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 14.09.2023 թվականի վճիռը բեկանել և գործն ամբողջ ծավալով ուղարկել նոր քննության:

3. Դատական ծախսերի բաշխման հարցին անդրադառնալ գործի նոր քննության արդյունքում կայացվելիք դատական ակտով: (...) »:

Վճռաբեկ դատարանի 11.09.2024 թվականի որոշման համաձայն. « 1. Թիվ ԵԴ2/15594/02/23 քաղաքացիական գործով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 03.06.2024 թվականի որոշման դեմ «ՔՐՈՈՒ ԸՆԴ ԱՍԱՏՐՅԱՆՍ» ՍՊԸ-ի բերած վճռաբեկ բողոքը թողնել առանց քննության: (...) »:

Թիվ ԵԴ2/15594/02/23 քաղաքացիական գործը 18.11.2024 թվականին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Շիլաջյանին, իսկ 21.11.2024 թվականին դատավորի աշխատակազմին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 413-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի նոր քննությունը դատարանում իրականացվում է դատարանում գործերի քննության համար սույն օրենսգրքով սահմանված կանոններով՝ հաշվի առնելով սույն գլխի առանձնահատկությունները:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 414-րդ հոդվածի 1-ին և 2-րդ, 3-րդ մասերի համաձայն՝ դատարանում գործի նոր քննությունն իրականացվում է գործը նոր քննության ուղարկելու մասին որոշմամբ սահմանված ծավալով:

Գործի նոր քննության ժամանակ վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանի կողմից տվյալ գործով կիրառման ենթակա նորմերի վերաբերյալ արտահայտած իրավական դիրքորոշումները պարտադիր են գործը քննող դատարանի համար, բացառությամբ այն դեպքի, երբ դատարանը ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ:

Մինչև գործի նոր քննությունը գործով հաստատված փաստերը գործի նոր քննության ժամանակ պարտադիր են դատարանի համար, բացառությամբ գործն ամբողջ ծավալով քննելու դեպքերի:

Վերոգրյալների հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-րդ, 199-րդ, 200-րդ և 234.5-րդ, 413-րդ, 414-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Գործն ընդունել վարույթ և եզրափակիչ դատական ակտը հրապարակել **2025 թվականի հունվարի 13-ին**՝ դատական իշխանության պաշտոնական կայքում:

2. Որոշումն անհապաղ ուղարկել լիազորված մարմին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը:

3. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ **ԱՆՆԱ ՇԻԼԱՋՅԱՆ**